

ՄԵՆԿԵԿԵՆ ՅԵԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ *)



Ա.

Այն տարին՝ երբ մենք Կորև գիւղից Ախալքալաք գաղթեցինք, վերջինս, խկապէս, քաղաք չէր, այլ մի մեծ գիւղ կամ գիւղաքաղաք։ Սխալ անուանով մի եկեղեցի և մի քանի հարուստների տներ.— ահա այն շինութիւնները, որոնցով Ախալքալաքը այդ ժամանակ զանազանուէր իւր չըջակալ հաղկական գիւղերից, որոց թիւն 80 ից անց էր եւ որոց բոլորի բնակիչներն էլ Կարնով գաղթականներ էին։ Սկեղեցու դաւթում ձեռնարկուած դպրոցական, բաւականին մեծ և լարմար շինութիւնը՝ տակաւին վերջացած չէր, ուստի «պտղիք ամբար»**) կոչուած մեծ շինութիւնը ժամանակակորապէս դպրոցի էին վերածել։ Այդ ամբարի մուտք կամարների տակն էին ուսում ստանում քաղաքի և մտակալ գիւղերի հարիւրաւոր քանուկները, որոնց թւումն էր իմ ծանօթ Սադոն,— Կորև գիւղի Տէր Մարգարի որդին։ Աշակերտների մի մասը կարդում էր «Քերական» կամ «տետրակ», մի մասը՝ «Սաղմոս» և միւս մասը՝ «Աստուածաշուէն»։ Սաղմոս և Աստուածաշուէն կարդացող աշակերտները միմիայն փալտեալ նստարանների վրայ էին նստում, միեւնոյն

*) Յիշողութիւններէս մի մասը տպուած է «Փորձ» ամսադրութիւնում 1877—78 թ. տ. X II-ում։

**) Գիւղերից հաւաքուած ցորեն ու դարձն, որ թեմական արհիւնք է, այդ ամբարումն էին հաւաքում։

ժամանակ և դրում, իսկ միւսները՝ քարած և փսիաթներով փռուած լատակի վրայ Ամբար-դպրոցում միջնորմներ չկալին, ալլ երեք բաժանմունքները կամ դասարանները՝ միմեանցից կամարներով էին բաժանուում։ Եւ չնայած դրան՝ դպրոցում համեմատական լուսթիւն էր տիրում միշտ։ «Քերական» և «Սաղմոսի» բաժանմունքներում—թող ասենք, առաջին և երկրորդ դասարաններում, ուսուցանում էր Կարապետ վարժապետ Մեծատունեանցը, իսկ Աստուածաշնչի բաժանմունքում, կամ երրորդ դասարանում՝ Տէր Սիմոն աւագ քահանայն, կարծեմ Տէր Վարդէնեանց ազդանունով։ Մի դասարանից միւսը փոխադրուելու որոշեալ ժամանակ չկար, ալլ դա կախուած էր ամեն մի աշակերտի ընդունակութիւնից, լաւաջադիմութիւնից։ Դպրոցում պարապմունքները լինում էին թէ՛ ճաշից առաջ և թէ՛ լետոյ, մինչև երեկոյեան ժամերգութեանց սկսուի։ Ըր Բացի հալերէնից՝ սովորացնում էին նաև կրօն, երգեցողութիւն և թուաբանութիւն։ Պարապմունքները հալ լեզուով էին լինում։—Սկզբի տարիներում ուսաց լեզու դեռ չէր աւանդուում։ Չմոռանամ ասել, որ ու խաչ եկեղեցու զաւթի դպրոցը կոչւում էր «Մեծ վարժատուն», որովհետև Ախալքաւ լաքում, ալլ ժամանակ,—և լետոյ էլ՝ դեռ չստ երկար տաւրիներ,—կալին նաև փոքր վարժատուններ՝ քաղաքի գրիթէ ամեն մի մեծ փողոցում, ամէն մի թաղում։—ամէնքն էլ մասնաւոր անհատների ձեռներէցութեամբ հիմնուած։ Կրանցում ուսում աւանդողները՝ հէնց իրանք հիմնարկողներն էին՝ թէ՛ տղամարդիկ և թէ՛ կանայք, անխտիր։ Սեանց խտրութեան ալլ դպրոցներում ուսում էին առնում նոյնպէս և տղաք և աղջկերք։ «Փոքր վարժատունները» դասընթացի որոշեալ ժամանակ թէև չուէին դարձեալ, բայց «Սաղմոսից» դէնը չէին կարող անցնել։ «Մեծ վարժատունը» միմիայն տղաքն էին բնդունում և այն ձրի, իսկ «փոքր վարժատներում» սովորող սաները իրանց «վարպետներին» կամ վարժապետ և վարժուհիներին վճարում էին, ինչ որ ուզում էին և ինչքան որ կաշողանում էին և՛ փող, և՛ աթար, (վառելիք, որ կենդանիւնների աղբից են պատրաստում), և՛ ձու, և՛ խւղ, և՛ պանիր, և՛ հաց և ալլն։

Սկզբնական գրադիտութիւն տարածելու դործում Ախալքաւի ալլ «փոքր վարժատունները» մեծ դեր են խաղացել ընդարձակ վիճակի բաղմաթիւ հալ ժողովրդի համար։ Ալլ տեւսակի դպրոցներ մընչև վերջին տարիներս դպրութիւն ունէին, այս իմ լաւ լալտնի է,—ոչ միայն Ախալքաւիւում, Ախալցէ խալում և Ալէքսանդրապոլում, ալլ նաև ալլ քաղաքների շրջականերում ուրիւած փոքր ի շատէ լալտնի ամեն մի հալ գիւղում։

Դեռ այդ տեղի վրա համարեմք, ձեռնդալ ալլ ճակն լալտնի տղանցմաւ տըր լալտնի քաղաքի մէջ դպրաթիւնի մի սխալ դիմողը դա՛ մեծ ուղեւորմաւ լոյսաբերող հալ դիմապնդալ դա՛ մեծ

Բ.

Իւր բաղմանդամ՝ ընտանիքը գլուղից քաղաք փոխադրելով՝ հայրս, ընտանաբար, զբաղուած էր զեռ մի որիէ գործ ճարելու թէ իրան և թէ մեծ եղբայրներին համար։ Իմ մասին մի ժամանակ ունէր հոգալու։ Գրեթէ ամեն օր ես մըտնում էի Ա. Խաչ եկեղեցու գաւիթը, հեռուից տեսնում էի իմ ժանօթ Սաքօյին և միւս բաղմաթիւ աշակերտներին կարգաւիս, բազում խաղալիս և նախանձում էի նրանց վրայ։—Նւտուն վերադառնալիս ամէն անգամ սկսում էի մօրս զահլան տանել, որ շուտով ինձ էլ վարժատուն ուղարկեն։

Այդ ժամանակ ես հաղիւ 8 տարեկան կը լինէի և թէպէտ 5 տարեկան հասակիցս սկսեալ, զեռ կօրխում եղած ժամանակիցս, հօրս և մեծ քրոջս մօտ կարդում էի միշտ, սակալն դպրոց մտնելու փափազը իմ մէջ մի հիւանդութիւն էր դարձել։ Հայրս էլ, մեծ քորս էլ ինձ միշտ խրատում էին առ ժամանակ համբերել։ Նրանք ասում էին, որ ես արդէն դպրոցի շատ և շատ աշակերտներից առաջ եմ աւելել, թէ «Սաղմոսը» ես արդէն ջրի նման կարդում եմ. թէ ես մինչև անգամ գրել էլ եմ իմանում, բայց և այնպէս մայրս իմ թախանձանքներից, քմահաճութիւններից չէր կարողանում ազատուել և, խեղճ մարիկ, շատ անգամ ինձ ծեծել է և լաց եղել, անհամբեր ընտանոթեանս պատճառաւ և եթի։

—Հայրդ անգործ, եղբայրներդ անգործ, — լալադին այլքերով ասում էր մայրս — էլ քնչպէս կարողանաք քեզ վարժատուն ուղարկել, երբ ուտելու ցամաք հաց անգամ չենք կարողանում ճարել։ Նւ լետով բացատրում էր, որ ինձ նման բոլորում տրեխներով, պատառոտուն շորերով ու վերքերով լեցուած գլխով երեխային վարժատուն չեն ընդունում, թէ անհրաժեշտ է, որ նախ և առաջ հայրս և եղբայրներս գործի լինին, ինձ համար շոր և կօշիկ առնեն, գլխիս վերքերը լաւացնել տան, որ ապա կարելի լինի ինձ դպրոց տալ։

Մօրս բացատրութիւնը, որ, երեւի, ինձ չվշտացնելու համար սկզբից չէր լալտնում, — ինձ զղաստացրեց։ Նւ ես ինքրս ինձ սկսեցի կշառադատել։ Նւ, արդարեւ, դպրոցում տրեխաւոր աշակերտներ շատ կալին, այդ ես միշտ տեսնում էի, բայց նրանց տրեխները իմ տրեխների նման հին ու մաշուած չէին։ Հին շորերով նոյնպէս շատ աշակերտներ կալին, բայց նրանց շորերը՝ այն աստիճան կարկատած չէին ինչպէս իմ շորերը։ Գլխի վերքերով աշակերտների ես նոյնպէս հանդիպում էի, բայց նրանց գլուխները «ձթած» էին, մինչդեռ իմ գլուխը ձթած չէր։ Ուրեմն, համաձայնում էի ես մօրս հետ, — որպէս զի ինձ կարելի լինի դպրոց մտնել, զեռ անհրաժեշտ են նոր տրեխներ կամ կօշիկներ, անհրաժեշտ են նոր շորեր,

վերջապէս անհրաժեշտ է իմ վերաբերեալ գլուխը ձթել *)—
 իսկ ալիք ամէն ծախսերը անելու համար՝ անհրաժեշտ էր, որ
 գոնէ միայն հալրս գործ ունենայր—Սակայն չունէր, չէր ճար-
 աւում:—«Երկինք, դեմինք» կապուած են մեզ համար,—ահա
 այն յուսահատ խօսքերն, որ ես լաճախ լռում էի իմ ծնողաց
 բերաններից: Եւ երբ որ ժամանակ առ ժամանակ էլի դիմե-
 լով մօրս՝ խնդրում էի իմ կօշիկների, չորերի և գլխի հոգքը
 քաշել, մայրս սպառնում էր, որ եթէ ես շարունակեմ իրան-
 նեղացնել,—այն ժամանակ՝ հալրս կրկին մեզ գիւղ կը վերա-
 դառնէ, որտեղ չէր էլ քո փոքրիկ տեղով, ցորեն ու դար-
 էիր աշխատում մեզ համար, իսկ ախտեղ մեր բերանի հացն
 էլ ես խլել ուզումս:—Այսպէս էր ասում մայրս և ինձ միան-
 դամաւն լռեցնում, լուսահատեցնում:

Գ.

Շարաթներն և ամիսներն անցնում և ոչ հալրս, ոչ էլ
 եղբայրներս չէին կարողանում գործ ճարել: Բայց ահա, լան-
 կարծ, բաղդը ժպտաց մի օր:—Ալիք ժամանակներում Ախալ-
 քալաքում երկու մարդիկ կալին, որոց ձեռքն էր Թէ Ախալ-
 քալաքի և Թէ ամբողջ վիճակի ժողովրդեան կեանքն ու մահը:
 Ալիք երկու անձինք երբ փողոցներում անց ու դարձ էին ա-
 նում, բոլոր մարդիկ ոտքի էին կանգնում, գլուխները բաց
 անում և խորը զլուխ տալիս: Երբ նրանք բարեհաճէին այս և
 այն մարդու հետ խօսակցել,—ալիք բանը՝ արդէն ամբողջ քա-
 ղաքի խօսակցութեան նիւթ էր դառնում: Կալին մարդիկ էլ,
 որոնք ալիք պարոններին, կամ մէկին ու միւսին հեռուից տես-
 նելիս՝ հեռանում, խոյս էին տալիս, որպէս զի միմեանց չը
 հանդիպին:—Կամ խորին ակնածումն և կամ խորին սարսա-
 փումն,—ահա այն տպաւորութիւնը, որ Թէ աշխարհիկ և Թէ
 հոգեւոր կոչման մարդկանց վրայ, անխտիր գործում էին ալիք
 երկու անձինք իրանց երեւելով, իրանց խօսքերով և վար-

*) 1830 թուականի դաղթական ժողովրդեան երեխաների մեծա-
 գոյն մասը մինչև այսօր՝ տանջւում է դիւի վէրքերով, որ ժառանգա-
 բար անցնում է որդոց որդի:—Ե՛հալա՛ ահա այն տխուր, որ տրտմ
 է այդ տեսակ երեխաներին երկու իսկ սեռից: Այժմ ինձ յայտնի է
 այդ հիւանդութեան ինչ լինելն և ինչպէս բժշկուելը: Իսկ մանուկ
 ժամանակ քեանքին բժշկում էին բացառապէս ընտանեկան դեղերով
 և միակ դեղն էր սև կուպոր (ձիւթ) մի քանի խառնուրդներով: Բժիշկ-
 ները բացառապէս պառաւ կանաչք էին լինում, որոց պիտի ձգողը
 էինք անտանում: Ալիք բժշկութիւնը շատ բարբառոտական է թէն,
 սակայն հիմնաւոր ժամանակակից բժշկականութիւնը, իւր բոլոր մի-
 ջոցներով՝ կարող չէ հասնել այն արագ և փայլուն հետեանքին, ինչին
 որ հասնում էին, և այժմ էլ հասնում են պիտի ձգողը հիւանդը պա-
 ռաւները: Եւ այս վկայում են իրանք բժիշկները:

մունքներով: Դոքա էին՝ Ալեկոյի աղա Պողոսեանց, և Ման-տեսի Կարապետ աղա Սաղաքեանց, կամ, ինչպէս ժողովուրդը, խալոբորբար, նրանց անուանում էր, «հաճի աղան» և «Ալեկոյ աղան» երկուքն էլ ղինուորական շորերով և կոճակներով: Պողոսեանը ուշակտկօյօլ դասեղատել էր և 40—45 տարեկան, բարձրահասակ և վախելակաղմ, իսկ Սաղաքեանը հոգեոր գործերի կառավարիչ 55—60 տարեկան, բարձրահասակ և շատ էիք կաղմուածքով,—մի կատարեալ մասըւուր: Պաշտօնական լարաբերութիւններում ժողովուրդը Պողոսեանցին նաչալնիկ անունն էր տալիս, իսկ Սաղաքեանցին՝ կաթողիկոսի փոխանորդ *): Այլ ճշմարիտ որ, ալդ մարդը հոգեւորական դասի հետ ալնպէս խիստ և դաժան կերպով էր վաբւում, որ հաղիւ թէ ինքը՝ կաթողիկոսը ալնպէս վարուելիս լինէր: Քաղաքի քահանաներն էլ, դիւղի քահանաներն էլ, անխտիր և առանց բացառութեան, տերեւների նման դողում, դողդողում էին նրա առաջ, որովհետեւ գիտէին, փորձերով տեսած էին, որ նրա «կապածը՝ կապած է, արձակածը՝ արձակած» Ախալքալաք մըտած օրից սկսեալ՝ մինչև մեր ընտանիքի ալդ քաղաքից դաղթելն՝ ես ինքս շատ անգամ ակնատես եմ եղել թէ՛ ինչպէս «հաճի աղան» քահանաների մօրուքներիցը բռնոտած քաշքշում, փնտում էր, նրանց ապտակում էր, հալհոլում էր, և ալն էլ՝ ամենխալտատակ և զաղրալից բառերով: Տեսել եմ՝ թէ ինչպէս «հաճի աղան» կօշիկներով սեղան էր բարձրանում և ալնտեղից իւր պատուէրներն էր արձակում կկեղեցում խռնուած քահանաներին, որոնք վիճակի դիւղերից, իւր հրամանով, եկած էին լինում Ախալքալաք՝ կաթողիկոսի փոխանորդի հրամանները լսելու: Տեսել եմ քահանաներ, որոնք «հաճի աղալի» առաջ ծունկ չոքած, գլխաբաց և արտասուալից աչքերով՝ գութ և ողորմութիւն էին խնդրում նրանից: Այլ ալդ ամէնը՝ ոչ թէ ծածուկ, ոչ հրապարակաւ, կկեղեցում, կկեղեցույ դաւթում, վողողոցներում և քաղաքի դաշտերումն էին տեղի ունենում:

Ոչ պակաս բարբարոսական էր «հաճի աղան» վարմունքը և ալն աշխարհականների հետ, որոնք ալս և ալն հոգեոր դործի համար՝ նրան էին դիմում: Պէտք է իմանալ, որ «հաճի աղան» անգրագէտ մարդ էր և բաւ գիւղացուց մինը, միմիայն իւր ղինուորական շորերովն էր զանազանւում: Նա շատ էր սիրում և դործ ածում հայհոյական բառեր թէ ոսերէն և թէ հալերէն: Իսկ նրա միակ քաղաքավարի բառն էր «լիմաբլիմաստուն» բառը, որով երբեմն սիրաշահում էր իւր լարգած քահանաներին:

Չնայած իւր անգրագիտութեանը՝ «հաճի աղան» լաճախ

*) Յայտնի է, որ Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսը՝ հոգեոր գործերի վարումը աշխարհական անձանց էր լանձնել դաւաճանեամ. 1907.

ալցելում էր դպրոցը և այլ ու ալն աշակերտին կարողալ տալիս նրա դասը։ Այս անգամ ընդհատում էր կարդացողին՝ ասելով որ նա սխալ է կարդում։ Աշակերտը կրկնում էր ուղիղ կարդացածը։ Բայց հաճի աղան պնդում էր թէ սխալ է։ Այս կոմեդիան կրկնում էր մի քանի անգամ։ Այնպես որ, վերջ ի վերջու, աշակերտը իր գլխիցը մի կամ մի քանի սխալ բառեր շարադրելով և հաճի աղալի հաւանութեանն արժանանալով՝ հաղիւ հաղ պրծնում էր նրա ձեռքից։ Ջարմանալիս ալն է, որ արդրողներում ներկալ եղող վարժապետն ևն՝ Հաճի աղալի կողմն էր անցնում և նույնպէս կրկնում էր, որ իբր թէ աշակերտը, արդարեւ, սխալ է կարդում։ Իսկ երբ Հաճի աղան հեռանում էր և մենք բացատրութիւն էինք խնդրում վարժապետից՝ վերջնիս միակ պատասխանը այս էր լինում։ «Հաճի աղան մեծ մարդ է։ Կէ կարելի նրան նկատողութիւն անել։» Այս ալդ մեծ մարդու ձեռքովն էին ընթանում լայնատարած վիճակի ամենատեսակ հոգևոր դործերը։ Նրա կատարած քննութիւններն էլ, արձակած վճիռներն էլ բանաւոր կերպով էին լինում։ Այս ժողովուրդը նրանց ընդունում էր և սուս ու փուս կատարում։ Ոչ մի անգամ և ոչ ոքի մտքով չէր անց կենում «Հաճի աղալի» երեսն ի վեր ասել թէ՝ օրինակ՝ նա ինչ իրաւունքով և կամ ինչ իրաւով, ամուսնալուծութեան դործերը քննելիս՝ մեղաւոր կողմին, իրիցուք կնոջը, իւր մարդու շալակն էր տալիս և մարդու աղցականներին հրամայում էր կնոջ ռողգի տալով՝ մինչև զեղ տանել։ Պէտք էր տեսնել թէ՛ ինչ վայնասուն, ինչ աղաղակ և ինչ տմարդի սրախօսութիւններ և զրախօսութիւններ էին տեղի ունենում, երբ մանկամարդ կինը՝ իւր տակ եղող մարդու զըլուխն էր կծոտում, մարդը՝ իւր բնուան (կնոջը) ձեռքերը խածոտում, իսկ նրա ազգականները՝ կնոջ ետքից խփում էին և խփում անդադար։ Ոհ, ալդ տեսարանները... ևս մինչև մահս կարող չեմ մոռանալ։

Ինչ որ անում էր «Հաճի աղան» ժողովրդեան՝ նրա սրա հոգևոր դործերի վերաբերութեամբ՝ նույնը անում էր և Աւետիս աղան մարմնաւոր դործերի վերաբերութեամբ։ Օր չէր անցնում, որ նրա դռան առաջ մի քանի մարդ չռողգի չուտէր։ Դա դատաւորութիւն և դատաւարութիւն չէր, ալ դահճութիւն և արիւնքուռչտ ներկայացում, որոնց ժամանակ քանի քանի հանդիսատես կանալք ուշադնաց էին լինում, քանի քանի մանուկներ ծիչ ու աղաղակ բարձրացնում, յալիս, հեկեկում էին իրանց ծնողների և եղբայրների մարմնի վրալ եղած հարուածները տեսնելիս։ Ռողդուց աղատ էին մնում միմիայն անչափահասները, քահանաներն և նրանց որդիքը։

Թէ Աստուծանը և թէ Պօղոսեանը ոչ միայն հզօր ծառայողներ էին, ալ նաև հարուստ փողաւորներ։ Գոնէ նրանց քնակարանների վառահեղութիւնը, բնականական նիստ ու կա-

ցը, կենցաղավարութեան եղանակը՝ կենդանի վիճակին Թէ Ախալքալաքի և Թէ նրա ընդարձակ վիճակի ալդ երկու «հոգեառ հրեշտակները», որքան ռոճիկ էին ստանում, կամ «որքան եկամուտ ունէին», — ալդ ևս չգիտեմ: Չեմ կարող նմանապէս ոչ մի հաստատուն կարծիք լալանել, Թէ նրանք, որպէս մարդ, ինչ լաւ կամ վատ լատկութիւններով էին օժտուած, ինչ սկզբունքներով և նպատակներով էին ղեկավարում, և ժողովրդեան ղեկավարում, բայց ես, որ լաճախ ականատես էի ալդ մարդկանց վերոյիշեալ գործողութիւններին, — ես ալդ մարդկանց չկարողացաւ սիրել, ալլ մընչև նրանց մահն՝ ատելով ատում էի: Եւ ալդ ատելութիւնը հետեանք էր միմիայն և միմիայն իմ տեսած դաժան և արնաշաղախ տեսարաններին, որոնք ալնքան զօրեղ տպաւորութիւն էին գործել իմ մանկական ուղեղի և սրտի վրայ:

Ենչպէս քիչ լատոյ կրտեաններ, Թէ Եղորեանը և Թէ Պողոեանը Ախալքալաքում ինձ և մեր ամբողջ ընտանիքին մի մի կատարեալ բարերարներ հանդիսացան: Եւ ես անձնապէս շնորհակալ և երախտապարտ եմ ալդ մարդկանց, բայց ալս հանգամանքը, ալնու ամենալնիւ, չէ կարողանում խեղդել իմ ներքին ատելութիւնը դէպ ի նրանց: Ալդ էր ահա պատճառը, որ նկարագրածս օրերից 16 տարի լետոյ, երբ Թիֆլիսում լսելով, որ Աւետիս Պողոեանցը իմ ծննդավայրում Ախալքալաքում, հոգևոր դպրոցի տեսուչ է ընտրուած՝ ես մի առակ գրեցի, որ լետոյ ալնքան սուղ նստաւ ինձ վրայ: Եւ ալն մարդիկ, որոնք գիտէին, որ Պողոեանցը ինձ միմիայն բարիք է արել մի ժամանակ Ախալքալաքում և ալնուհետև մենք միմեանց հետ ոչ տեսնուած և ոչ էլ որևէ գործ էինք ունեցած՝ զարմացան, ապշեցան և «ապերախտ» տիտղոսով մկրտեցին ինձ: Իսկ հայրենակիցներս սկսեցին հալածել ինձ, որ իրանց կովեր էի անուանել, իրանց երեսմաներին՝ հորթթուկներ, իրանց դպրոցը՝ ախոռ, իսկ տեսչին՝ «պող էշ», որ իրան լանձնուած հորթուկ աշակերտներին սովորեցնում էր բացի կովի նման բառանչելուց, նաև իշի պէս զուար: — Ալդ առակը՝ իմ պատանեկան առաջին գրուածքն էր, որ չգիտեմ «Հալիական աշխարհի» որ թուականի և որ տմսատետրում տպագրուեցաւ:

Վուցէ իմ առակը անտեղի և անարդար էր: Գուցէ Պողոեանցը լաւ տեսուչ էր: Ալդ ես չգիտեմ: Այս ևս պէտք է խոստովանեմ, որ լիշեալ առակը գրելիս՝ ես գիտակցաբար ի նկատի չեմ ունեցել Ախալքալաքի հոգևոր դպրոցի և նրա սաների շահը: Ալ իմ գլխաւոր նպատակն է եղել խալթել, վիրաւորել Պողոեանցին, վրէժխնդիր լինել ալն բարբարոսութիւնների համար, որ նա մի ժամանակ գործում էր Ախալքալաքում ուշաստկովի դասեղատել եղած ժամանակը: Սակալն դառնանք մեր լիշողութիւններին:

Դ.

Մի օր, երբ ես, ըստ սովորութեանս, եկեղեցու բազում նստած մօտիկ էի տալիս պատգիւրի ամբարանում կարդացող աշակերտներին, այստեղից դուրս եկաւ «Հաճի աղան»։ Մեծ ակնածութեամբ նրան ձանձաղարէ էին ձգում ուսուցիչներ։ Տէր Սիմօնը և Կարապետ Մեծատունեանցը։ Ինձ նստած տեսնելով՝ երկուքն էլ նշանացի հասկացրին, որ հարկաւոր է կանգնել և դուրսիս բաց անել։ Ես արդէս էլ արի և կարծելով, որ հաճի աղալի և ուսուցիչներէ մէջ ինձ աշակերտ ընդունելու մասին խօսք ու զրից է եղել, իսկոյն մօտեցաւ հաշի աղալին և ասացի՝ հաճի աղա, ես եմ։—Դու ո՞վ ես, հարցրեց հաճի աղան։—Էյս եմ, պատասխանեցի ես։—Տէր Սիմօն ու Կարապետ վարժապետը ձեռքով ինձ լետ մղեցին կոմագուկ։

—Ո՞վ է այս լակոտը, դարձաւ Եաղուբեանը զէպի ուսուցիչները։

—Զգիտենք, պատասխանեցին ուսուցիչները և ինձ յետէին մղում նորից։ Բայց ես ոտքերս դէմ տուի՝ միանգամայն վերաւորակելով լսածիցս և տեսածից։—Ինչի էք վախժում, ես էլ եմ ուղում վարժատուն դալ, ասացի և կանգնեցաւ։

—Մօ, քեան, դու ում մանչն ես, հարցրեց Տէր Սիմօնը։
—Թիւթիւնճի Աղաբարին, պատասխանեցի և վերաւորակեցաւ Տէր Սիմօնի արտասանած քեալ (քաչալ) բառից։ Երեկ տէր հալրն էլ, իւր հերթում, վերաւորուած էր իմ իրանցոյց տուած ընդգիմութիւնից։

—Մօ, հարդ ինչ սէնիաթ ունի, հարցրեց հաճի աղան։

—Թիւթիւնճի է, աղա։

—Ճանլէք կը, դարձաւ Եաղուբեանը ուսուցիչներին։

—Զէ, Հաճի աղա, ստրկական ձևերով պատասխանեցին նրանք։

—Աղան, Կօրխէն ենք մենք այստեղ եկել, վրալ բերի ես։

—Սաղ օրը աստեղ Զիւլ-Ֆիւ Էլլա (Թափառում է), վրալ բերեց տէր Սիմօնը։

—Ես կուգամ, որ վարժատուն մտնիմ, աղա, հաղիւ ասացի ես և սաստիկ վերաւորուած Տէր Սիմօնի խօսքերից, ըսկեցի արտասուել։

—Մօ, դու քեան ես, քեան, ինձ ալրող ներքին կրակի վրալ ձէթ ածեց Հաճի աղան։

—Տիւն, (ահա) ձեր վարժատունն ա (էլ) շատ քեալիւր կան, աղա, ես ա (էլ) զլխուս ձութ ձգել կուտամ։

—Գնը՝ (դնա) հօրդ զրկէ քովս, ասաց Հաճի աղան և հեռացաւ։

—Մօ, ինչ ազդումն (կատաղի) ես եղել, լակոտ, ասաց Տէր Սիմօնը և քալերը զէպի դպրոցն ուղղեց։

—Քեաղդան, քեօսդան, չօլախդան (չքաչալից, կոլրից և կաղից, պէտք է վախենալ)՝ փնթփնթաց կարապետ վարժապետը և նոյնպէս զպրոց մտաւ ճաճկական այս առածի վերջին երկու բառերը, այն ժամանակ ինձ անհասկանալի էին։ Ասկայն հասկացայ, որ առաջին բառը ինձ ծաղրելու համար ասուեցաւ։ Բայց, կարծես բնադդմամբ, ըմբռնելով որ Հաճի աղան հօրս ուզում է տեսնել, որպէս զի ինձ զպրոց ընդունէ,—ուրախութիւնից դժի նման վազ տուի տուն՝ ճանապարհին երկու անգամ սալթաքուելով և վար ընկնելով և քինթ ու պըռնդս ջարդոտելով։

Ինձ արնաթաթախ տեսնելով մալրս՝ քիչ էր մնում լիւղաճաք լինիլ։—Մի կողմից նա իմ երեսս էր լուսնում, արնոտած շորերս սրբում և միւս կողմից՝ անդադար հարց ու փորձ էր անում՝ «սկ տղայ, ո՞ւմ հետ կուուեցար, քեզ ո՞վ թակեց, հօ դու էլ ուրիշին չես խփել, չիս արնոտեիր»։—Եւ չէր ուզում հաւատալ, որ ես վար ընկնելուց եմ միայն վիրաւորուել, որ «Հաճի աղան» խոստացել է ինձ վարժատուն ընդունել։ Մի քանի րոպէից լետու հալրս ներս մտաւ և ինձնից լսելով «Հաճի աղալի» պատուէրը՝ իսկոյն գնաց նրա մօտ։

Նոյն օրը, երեկոյեան, մեր տնեցւոց ուրախութեան չափ չկար։—Այդ օրը մենք առաջին անգամ ուրախ ընթրիք վաճակեցինք, որ բաղկացած էր բացի ցամաք հացից, այլ նաեւ երեք հատ սխաբի գլխներից, որ փեղոցներում խաշում և հատը հինգ կոպէկով վաճառում էին աղքատ ժողովրդեան այն ժամանակ և մինչև այժմ էլ։

Բանը նրանումն է, որ «Հաճի աղան» հօրս պաշտօն էր լանձնել՝ ու խաչ եկեղեցու ժամկուսութիւնը,—որ, հօրս պատմածներին նախելով,—չառ շահաւէտ պաշտօն է եղել։ Որովհետեւ բացի ամսական 2 րուբլի ուժեղից, բացի արլի մեռելների դիակները լողացնելու վարձից, բացի պատահական մանր մուրն նուէրներից, ժամկույր իրաւունք ունէր այն ժամանակ (թերեւ և այժմ) ողջ քաղաքի ամեն մի ծխական տընից, և ամեն շարաթ օրերում, հաց ժողովել,—անշեցելոց բաժինըրդ։—Հալրս հաշում էր, որ շաքաթական ժողովելի հացերով ոչ թէ միայն մեր դերդաստանի սննդեան համար հարկաւորեալ հացը աւսալիսով կըհալթհալթէ, այլ նաեւ կարող կըլինի ամսական մի քանի մանէթի էլ հաց վաճառել ուրիշներին։

Եւ որովհետեւ մեր ընտանեկան այս արտակարգ բաղաւորութեան պատճառը ես էի, ուստի ինձ տրուած օրհնութիւններին ու համբարներին և դովետներին չափ չկար։ Այդ երեկոյին ես կատարեալ օրուայ հերոս էի դարձել։ Մի-

ախ թէ,—սիրաժողովաւ ձայնով մի քանի անգամ նկատուի էր հայրս ինձ,—մեծ մարդկանց և վարժապետների հետ խօսելիս՝ նա պարտաւոր եմ շատ քաղաքավարի լինել, նրանց հետ համարձակութեամբ չպիտի խօսեմ, նամանաւանդ՝ նրանց աւածին և հրամայածին ոչ մի ընդդիմութիւն չպիտի ցոյց տամ։ Սակայն իմ ուրախութեան պատճառ ոչ գովեստներն էին և ոչ էլ համբարներն, այլ այն, որ հաճի աղան հօրս իրաւունք էր տուել իմ դուխը ձթել և ապա ինձ դպրոց տանել։ Հօրս նկատողութիւնը,—ինչպէս նա լատենց,—հետեանք էին հաճի աղալի և եկեղեցու աւագ էրէցի,—ընթերցողիս լատենի Տէր Սիմօնի,—գանգատանաց։ Եւ, որ չէի էլ իմանում թէ հաճի աղին և տէր Սիմօնին վիրաւորուած եմ եղել այդ օրը։ Խօստացաւ հօրս, որ իւր պատուէրների համեմատ կը վարուիմ ալուհետեւ և անկողին մտաւ։ Բայց, կարծեմ, կամ ամենեւին չքնեցաւ և կամ քիչ քնեցաւ։ Միմեանց հակառակ զգացմունքներս ողջ դիշերը ինձ հալ ու մաշ արին։ Մի կողմից անչափ ուրախ էի, որ վերջապէս դպրոց եմ մտնելու, միւս կողմից, տխրում, լուսաշատում էի, որ գլուխս ձիթելու եմ։ Որովհետեւ գլուխ ձիթելու, նամանաւանդ 15 օրէնք մի անգամ ձուլթը պոկելու դարձուրելի արարողութեանը ծանօթ էի։ Եւ շատ անգամ հեռուից տեսած և լսած էի այն աղետարար աղաղակներն և դողուն դուլներն, որ հանում էին իմ հասակի և ինձանից մեծ և փոքր մանուկներ ղուլթ ձգող անդուլթ պառաւանդի ձեռքից։

2.

Առաւօտեան զարթնելիս՝ մայրս պատմում էր, որ ես երազումս ջղալին ցնցումներ եմ ունեցել, լաց եմ եղել, աղաղակել եմ, հախուչել եմ։ Եւ երբ ես նրան բացատրեցի իմ տագնապը՝ գլուխս ձիթելու նկատմամբ,—նա խնդրեց լատենց, որ ինձ չի թող տալ վարժապետին դնալու։ Եւ նախապառիւ է համարում, որ ես շարունակեմ ուսումս, ըստ առաջնոյն, տանը հօրս և մեծ քրոջս մօտ։ Հայրս հակառակ էր մօրս կարծիքին նախ՝ որովհետեւ գլուխ ձիթելն այնքան էլ երկիւղալի բան չէ, ինչպէս ես եմ երեակալում։ Երկրորդ՝ որովհետեւ հայրս ալթմ պաշտօն ունենալով՝ ինձ հետ պարապելու աղաւ ժամեր կարող է չունենալ։ Գալով քրոջս՝ նա էլ իւր ասղնեգործութեամբն է պարապելու։ Եւ որովհետեւ ես աւելի հօրս կարծիքին տրամադրութիւն էի ցոյց տալիս, ուստի երկար խօսելուց և վիճելուց լետով՝ ծնողքս որոշեցին իմ գլուխը ձթել տալ։ Նոյն օրն և եթ հայրս ինձ տարաւ լատենի ձուլթ ձգող Սալվի պառակի մօտ։

—Անն, չէ կարելի առանց ձուլթ ձգելու իմ գլուխը լաւացնել, այս եղաւ ահա իմ առաջին հարցմունքը պառակին,

կրբ սա գլխիս վերքերը անողեց վերջացրեց.— Չէ, որդի, դու
 հեշտուն առաջույն էս, պատասխանեց ինձ պառուը և հօրս
 դառնալով լալանեց, որ լանձն է տանում $\frac{1}{2}$ տարուայ մէջ բո-
 լորովին բժշկել գլխիս.— Ես սկսեցի լաց լինել, մոռնելով
 թէ արդեան ժամանակում քանի քանի անգամ ինձ պէտք է
 նահատակէ պառուը՝ ամէն անգամ գլխիս ձութը պոկելիս։
 Սակայն Սալվին՝ նորից անողելով գլուխս, հօրս էլ, ինձ էլ
 միամտացրեց միանգամայն, որ իմ գլխի վերքերն այն տեսա-
 կիցն են, որ ամենաշատը կրկու ամսէնը մէկ անգամ հարկ
 կը լինի՝ հին ձութը պոկել և նորը փակցնել։ Եւ ճիշտ արդ-
 պէս էլ եղաւ, պառու Սալվին թէ իւր արուեստին (ինչու չտ-
 սել գիտութեամբ) և թէ իւր խօսքին՝ կատարեալ տէրն եղաւ։

Պառաւի պատուիրուած զեղօրալքը՝ նոյն օրն ևս իմ գլուխը
 դնեց. գլուխս ածիլիկ տուեց և նոյն օրն և եթ իմ գլուխը
 ամբողջապէս ձիթուեց, նախշուն թաշկինակով գլուխս փա-
 թթած՝ միւս առաւօտը հօրս հետ՝ ես գնացի «մեծ վարժա-
 տունը», ուր ինձ հարցաքննելով ընդունեցին «Աղմուսի» բա-
 ժինը, այսինքն Բ. դասարանը։ Շատ ու շատ տարիներեց
 լետով, ի հարկէ, ես հասկացալ, որ կարապետ Մեծատուն-
 եանցը իւր ժամանակի վատ վարժապետներից մէկն է եղել։
 Աշակերտներս նրա մօտ կարդում էինք ի հարկէ, առանց
 կարդացածներս մազի չափ հասկանալու։ Թուարանութիւն է-
 ինք սովորում, առանց հասկանալու և ըմբռնելու։ Սեծապէս
 տանջւում էինք նամանաւանդ պիւթագորեան աղիւսակը մե-
 քենալաբար, անդիւր սովորելիս.— Լաւ միտս է. մի անգամ երբ
 Մեծատունեանցը դառնալով ինձ հարցրեց՝ 4 անգամ 4 որքան
 է անում և ես սկսեցի մօքով մատներիս վրայ հաշուել, որ
 պատասխանեմ, մէկ էլ լանկարծ չրանք, չրանք, վալժապետս
 սկսեց ապտակել ինձ ասելով՝ «հա՛ա քեզ մատներիդ հետ խա-
 դալ, հա՛ա քեզ մատներիդ հետ խաղալ»։ Թէ և ես լաց չեղալ,
 ինչպէս որ չատերն անում էին արդարի ղէպքերում, և չեմ
 էլ իմանում թէ ինչի համար լաց չեղալ, բաց արդ դժբաղդ
 օրում իմ երեսին հասած ապտակները ողջ կեանքումս միան-
 գամայն դժբաղդացրին ինձ... Թուարանութեան և առհասա-
 քարակ, մատեմատիքայի մէջ. Գոնէ ես ինքս ալպէս եմ կար-
 ծում։ Այդ դժբաղդ օրից լետով՝ մինչև մեր գերդաստանի Ա-
 խալքաւակից գաղթելը, չորս ամբողջ տարի ես այլևս չկարո-
 դացալ թուարանութիւն սովորել։ Ախալցխալում ես մտալ նախ
 տեղւոյն հոգևոր դպրոցը և աւարտեցի, սակայն թուարանու-
 թեան մէջ միշտ և հանապաղ թող և անպէտք եմ եղել։ Եւ
 եթէ մի դասարանից միւսն եմ անցել, ալ եղել է ի շնորհս
 վարժապետների, մանկավարժական խորհրդների և տեսուչնե-
 րի զինողականութեան և միւս առարկաներում ունեցած լա-
 տաշաղիմութեան։

1861 թուականին ես գնացի Թէոդոսիայի խալպեան
 դպրոցը։ Այնտեղ էլ մատեմատիքական առարկաների մէջ իմ

չառաջադիմութիւնը մաղի չափ առաջ չգնաց, խալիպեան դրա-
րոցում մատեմաթիքան աւանդում էր Պեթին ազգանունով
մի ուսու պարոն, որ, միևնույն ժամանակ, դպրոցի տեսուչն էլ
էր և ամենապատուական մի մարդ և մանկավարժ, Օրհնուած
լինի նրա լիշատակը. որքան ինձ փափախում էր, որքան
խորախուսում էր, որքան փոփոխում և դիւրացնում էր իւր
հարցմունքները ինձ դաս հարցրած ժամանակ... Բայց... իդուր
Եւ, խեղճ Պեթին, ինձանից աւելի, կարող եմ ասել, ինքն
էր տանջւում և վշտանում հոգեպէս, երբ ես բոլոր ժամանակը
արձանի նման գրատախտակի տակ՝ կանգնած գոյն էի տա-
լիս և գոյն էի աւնում: Շատ լաճախ պատահում էր, որ խա-
ղամիջոցների ժամանակ՝ ընկերներէից ծածուկ ես մտնում էի
դպրոցի ընդարձակ միջին և խոնաւ ներքնալարիք և ծունր
չորած ամենամեծ ջերմեանդութեամբ աղօթում էի Աստծուն
որ ինձ սրամտութիւն պարգևէ:— Սակայն այս միջոցն էլ չէր
օգնում, Եւ եթէ խալիպեան դպրոցում ևս ես փոխում էի դա-
սարաններս՝ այդ լինում էր բացառապէս, տեսիլ (Պեթինի)
և վերատեսչի (Գաբր. վարդապետ Ալվաղեանի) բարեհաճու-
թեամբ, որոնք արդէն շատ լաւ իմանում էին, որ մատեմա-
թիքալի մէջ ես մի անուղղելի բթամիտ եմ:

— ամառ, ձմեռ... և ետեւում դասը տեսնում եմ
չօքնալար, նախաճաշը Է.
— Եւ ինչ զիջմունքով և ոչ զիջմունքով ես չարօրոյր ձ նստիմ

Բաւական չէ, որ տէր Սիմօնը աւանդելու որեւէ մէթոդ
չունէր, այլ նա, միևնույն ժամանակ, շատ բարկացկոտ մարդ
էր: Ուստի և ամեն մի դատարկ բանի համար՝ թակում էր
մեզ, աշակերտներս: Ապտակ, «թաթ» կամ քանոնով ձեռքե-
րի խփել, երբեմն նաև փալախկալ տալ՝ ս. խաչ եկեղեցու
աւագէրէցի սովորական պատիժներն էին: Եւ ամեն անգամ,
երբ այս կամ այն չարաճճի (դու հասկացիր աշխոյժ և կենդա-
նի) աշակերտը թաթ կամ փալախքալ էր ուտում, տէր Սի-
մօնը՝ քիթն ընկած ձայնով՝ անդադար կրկնում էր շօրհնալ
է փալտն, որով լինի արգարու...»

— Ինչո՞ք խաչափալտ, սիրոյ և համբերութեան չով սուրբ
քառաթեւ *) քո անունով որքան չարութիւններ և դահճու-
թիւններ են գործուել աշխարհիս երեսին:

Բնական է, որ տէր Սիմօնի նման մանկավարժներն՝ ի-
րանց սաների կողմից սէր չէին կարող վալելել: Եւ մենք ոչ
միայն նրան չէինք սիրում, այլ և ատելով ատում էինք: Եւ
չնայած, որ սաստիկ վախենում էինք տէր հօրից, չնայած որ,
սովորութեամբ արդեօք կամ բնազդմամբ իմանում էինք, որ
դէպի հոգևորականը՝ պէտք է լարգանքով վերաբերուել, այ-
նուամենայնիւ լարմար առիթը եկած ժամանակ, երբ տէր

*) Շարական:

հայրն ու էր մտնում դասատուն, կամ զանգակից առաջ հե-
ռանում էր, այսպիսիներեց շատերը, երբեմն ամբողջ դասա-
րանը, սկսում էինք տէր հօր «տնադը տալ»։ Մեղանից մինը
իւր աչքն էր շլացնում, միւսը քնթիցն էր խօսում, երրորդը
մի ալ ծամածռութիւն էր անում և ալլն և ալլն։

Այստեղ ես պէտք է ընթերցողին լստենմ հետեւալը։
Այդ ժամանակներում՝ Ախալքալաքի փողոցների մանուկնե-
րի բերանում մի երգ էր պտտում։ Դա մի պատկիւլ էր, որ,
ինչպէս վերջերում իմացուեցաւ, թրինում էր լատկապէս
տէր Սիմօնի վրայ, որ «յէ եր» փողոցային մանուկների բե-
րանից՝ պատկիւլը անց էր կացել դպրոցի աշակերտների բե-
րանը։ Գոնէ մեր դասարանի աշակերտներից շատերն անգիր
իմանում էին։ Իմացողների թւում ես էլ կալի։ Մի օր, երբ
տէր Սիմօնը դեռ դասատուն չէր մտել, ես բարձրացաւ ու-
սուցչի աթոռի վրայ և սկսեցի դիրիժօրի պաշտօն կատարել։
Եւ լսալիսուի, ամբողջ դասատունը, իմ ղեկավարութեամբ,
կամացով ձայնով սկսեցինք երգել։

«Ախալքալաք, տէր Սիմօն,
Չախ րմպէ ընդ լիմօն։
Քուֆթան ուտէ ընդ քիմօն...»

Եւ ահա լանկարծ դուռը բացում է և... խեղճ քահա-
նայ, պատն ի վեր արձանացած, դուռնատուում, դարձիթիցը
սկսում է դողողալ։ Եւ «խալախալի» ենթարկուեցի, ութ ու-
րիշ աշակերտների՝ «թաթի», իսկ մնացեալները առանց ճաշի՝

Այս անցքից լսող՝ տէր Սիմօնը միշտ խէթ աչքով էր
նայում ոչ միայն իմ, այլ և հօրս վրայ, որ արդէն իւր ստո-
րադրեալն էր։ Եւ, ինչպէս լսող կրտսերները, իմ այս վար-
մունքի պատճառաւ՝ հայրս զրկուեցաւ իւր պաշտօնից, որ իմ
միջոցաւ էր ստացել։

ԵՂԻՇԷ Գ. ԴԵՂԱՍԵԱՆՑ

(Վերջը միւս համարում)։